# Չկայացած վարժապետություն

Կամավորական զորամասը վերադառնում էր տուն:

Մոտ երկու ամիս առաջին գծում, ասել է, բավական է չթվարկելու մանրամասները, շեշտավորել դժվարությունները:

Վերջապես կտեսնեն հարազատներին, բայց տղաները կասկածանքով են բաժանվում դրախտային այս վայրից, նրա հանդեպ պատասխանատվությունն համարելով իրենը:

Գնդապետ Վարդան կարապետյանը ճանապարհից առաջ վերջին ցուցումներ է տալիս: Նրա թախծոտ, մեղմ ժպիտը խառնվում է մայրամուտին: Զինվորյալները դժկամ, ուսերը վեր քաշելով բարձրանում են մեքենաները:

Գնդապետը մնում է...

Շահումյանն զոհաբերելուց մի շաբաթ առաջ էր:

Շարասյունը շարժվում էր դանդաղ: Հարկադրված կանգառներն ավելի հոգնեցնող են, քան թափքերում վեր ու վար լինելը:

Անհասցե, կոպիտ հայհոյանքները խառնվելով ծխի հետ օդը զաղջ են դարձնում: Սովոր ականջի համար դրանք անմիջական են:

Ամբողջ ճանապարհին, որը տևեց մի օր, ոչ ոք աչք չկպցրեց:

Բլոտ են խաղում, կատակներ անում, պատմում այս կամ այն դրվագի մասին, ընդգծում հատկապես ընկերոջ կարպարածը: Ռեմբոներ, կամիկաձեներ, դժոխային վարորդներ Ղարաբաղում շատ կան, որոնք համեստորեն կրում են իրենց փառքը...

Շուշիից հետո հայհոյանքներն խպառ վերացան: Կարծես նորեն մկրտվեցին Ս. Ղազանչեցոց եկեղեցում, թողություն ստացան: Համազարկ տվեցին Շուշիի համար զոհվածների հիշատակին:

Դինջը, որի անունն այդպես էլ չիմացա, դիմացս նստած 17–18 տարեկան պատանու հոգու հետ էր խաղում, երկդիմի պարզունակ հարցեր տալով, անշառ դիտողություններ անում, ապա ծուռ ժպտում էր, որ տղան շփոթված բարկանում է, անհասկանալի փնթփնթում, ապա ավելի ամուր գրկում ավտոմատը, հայացքը փախցնում դուրս:

Իսկ Դինջը, որ շատերի նման հայհոյանքների դասակից չէր, թաքուն գողտով, հոր նման նայում էր տղային, այնպես որ վերջինս դա չնկատեր:

-Ժուռնալիստ Վարդանին ճանաչում ես, - վստահ պատասխանը դրական կլինի հարցրեց ինձ:

-Ո՞ր թերթից է: Ազգանունն ի՞նչ է:

-Չգիտեմ, - հիասթափված պատասխանեց Դինջը:

Նա համոզված է, որ ժուռնալիստներն այնքան քիչ են, որ իրար անունով էլ կիմանան:

-Դե գոնե նկարագրի, կամ ո՞նց եք ծանոթացել:

Դինջը խոսելու հետ էլ գլուխ չունի: Բայց երկար ճանապարհ է: Շատ կուլտուրական է, փոքր մորք, մենակ գրական է խոսում:

-Իսկական ինտելիգենտ, -մեջ է մտնում մի ուրիշը, - Դինջ, Վարդանի մասին ես ասում չէ՞:

Դինջը երկու ընկերների հետ 91 թվի գարնանը Քելբաջարի վրայով 12 օրում հասնում են Գետաշեն: Վեց օրվա պաշար են վերցրած լինում...

Գյուղում նրան է մոտենում մեկը և հարցնում տարիքը: Տասնչորս, պատասխանում է ինքը: «Շատ միամիտ է, - բացատրում է Դինջը, - հավատացեք»:

-Լավ է, - պատասխանում է Վարդանը, - ես էլ եկել եմ այստեղի դպրոցը, գործի գցելու: Ուրեմն առավոտ շուտ կգաս դասի:

Այ, թե դաս ենք անում:

-Հա, լսենց դաս ենք անելու, -մտքում ասում է Դինջը, -թուրքերը ռուսների հետ հանձնաժողով կազմած եկել են դասալսման:

Վաղ լուսաբացին սկսվում է կռիվը: Թշնամին ռմնանա կրակում է մերոնց դիրքերի վրա: Զենքի տեսականին հարուստ է, փամփուշտները անսպառ: Մերոնք պատասխանում են նպատակային, գործում հաշվենկատ:

Մարտը գնալով թեժանում է:

Մի պահ կրակի կենտրոն է ընկնում դպրոցի շենքը: Մի քանի մետրից հազարավոր գնդակներ են արշակվում պատերի, դռների ու պատուհանների վրա:

Տղաներն ավելի ապահով դիրքավորման նպատակով գնդակների գերումախս են անում, առաջ են նետվում դպրոցում ամրանալու համար:

Հանկարծ ներսից մեկը բղավում է. - Տղաներ մի կրակեք, ես այստեղ եմ:

-Դասատուն է, - ծիծաղում է Դինջը:

-Մի հատ ժուռնալիստ ունեինք, են էլ վարի էինք տալու, - շարունակում է մի ուրիշը:

Այդքան բան տեսած մարդկանց համար պահը հրաշք է դառնում, որը հրաշալի ավարտ է ունենում: Ժուռնալիստ Վարդանին բոլորովին անվնաս դուրս են կորզում կրակի օղակից:

Դինջի իսկական անունը չգիտեմ և ժուռնալիստ Վարդանին էլ ծանոթ չեմ:

Թերևս Դինջն իրավացի է, որ ժուռնալիստներին կարելի է մատների վրա հաշվել:

Լաչինում կանացի լուսանկարով օրացույցը մի քանի պտույտ չնորից չոր անցավ...

Լ. Մարգարյան